# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"3" ապրիլի 2013թ. № 39-Ա

## ՍԱՄՎԵԼ ԹԱՆԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի մարտի 22-ի N 2015-Ա որոշման 2-րդ կետի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

2013 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդում մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանի պետի (ծածկագիր՝ 68-2.1-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կայացած մրցույթի հարցազրույցի փուլի գնահատման ընթացքում դրսևորած սուբյեկտիվ վերաբերմունքի, մասնակցին հուշելու, սխալ պատասխանները ճիշտ կամ թերի գնահատելու համար մրցութային հանձնաժողովի անդամ, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (ծածկագիր՝ 68-2.1-3) Սամվել Թանգյանի նկատմամբ կիրառել «նախազգուշացում» կարգապահական տույժը:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի մարտի 22-ի N 2015-Ա որոշումը, Ս.Թանգյանի գրավոր բացատրությունը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ.ապրիլի 3
ք. Կապան